

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	համար
սարեկան	12 ֆր.
վեցամսայ	7 "
Արսասահմանի	
համար սարեկան	15 ֆր.
վեցամսայ	8 "
Աւերիկայի համար	
սարեկան	3 ֆր.
վեցամսայ	1.50 "

Ծանուցումն տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է, երեքին աւերիկան սեղանահոս համար 20 0/0 զեղը կրլայ:

Վառեայի համար ձեռք 10 սանթիմ է

ՇԱՐԱՒ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՂՄԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲԵԱԲԹԻ ԵՒ ՇՍԵՄԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Դասակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржуръ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեն տրուի

ՇԱՐԱՒՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԿԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԶՈՒՇՈՒՄ

(ԹԻՖԼԻՉԻ «ՍՐՇԱԼՈՅ» ԹԵՐԹԻԾ)

Անցնում ենք փոքր մէջդան. խըմբում են բազմաթիւ հայեր. Կեանքը ծայրայեղ անապահով վիճակի մէջ է. նկատուում են զիրքերու գինեորուած ծերեր եւ կանայք. Մի քանի տեղ երեւում է սպանուած դիակներ իրարեւ կեանքի Մի քանի խանութներում են սպանուած են թուրքերը. հայերը ինքրուում են անձնատուր լինել, որ նրանց ձեռք չեն առ բայց թուրքերը ըստ երեւոյթի չեն վտանգանում եւ պաշտպանուում են:

Հասնում են եւ ամեն կողմից ուսուցողութեամբ. մի թուրք մրգավաճառի առջ, ուսուցողները երաշխաւորում է նրան իր կեանքով անձեռնմխելու թիւն. բայց սա չի հաւատուում եւ չորս օր շարունակ մնում է նոյն տեղը. սպանելով այնտեղից երկու հայերի:

Անցնում ենք այնտեղից քաղաքի ներքին մասերը Մեծ իրարանցում է տիրում. թուրքական թաղերի մօտ ապրող բազմաթիւ բնակիչները անցնում են հայկական կենտրոնները. Շատերին անհանգստացնում է թուրքական բազարում մնացած հայ վաճառականներին, արհեստաւորներին, բանուորներին վիճակը. Ինչ է պատահել նրանց հետ. սպանուած թէ գերուած են:

Հրացանների գնդակները վզվզաւով անցնում են մի թաղիցը դեպի միւրը. Գիշերուայ ծանր ընդհանրը շատ եւ շատ են երկարացել. վերջապէս դադարում է հրացանաձգութիւն. Հինգ ժամ զինադադար Օգոստոսի 17-ին արշաւոյսի հետ թուրքական թաղից հայկական են անցնում Մօսկովի գնդակի վզվզոցը եւ գում-գումի արաքոցները. Լուսարացին մեր աւանը է հասնում մի քանի ծանօթների մահուան լուրը. Աբեկղենց կտրուում մեր առջ ընկած էին մի քանի թուրքերի դիակներ. Նրա վերին մասում աղբիւրի ջուր չէ հասնում. Չարէղլուի թուրքերը կտրել են քաղաքի ջուրը. Բաղաքից դուրս թուրքերը հրդեհել են թամիրեանի գործարանը. Դա այն թամիրեան է որ բերել է տուելիք դաքի թէ թուրքական եւ թէ հայկական թաղերի համար ջուր:

Առաւօտեան հիզիկա կիզու թեան են

ենթարկուել վերին դարձաւ մօտ գտնուող թրքական աները որը Չար սղու գիւղացիների բունն է համարուում որոնք կարող էին մեծ խանանալու թիւն ձգել հայ ժողովրդի մէջ, եթէ հակառակ դիրքից գնդակահարէին հայկական թաղերը. Այդ տեղի թուրք բնակիչները տեսնելով վերահաս պատահարը ապաստարան են գտնում զօրանոցում:

Ժամը 10-ին թուրքերը հաշտութեան առաջարկներ են անում. հաշտութեան տեղ նշանակում են Խունուցի տունը. Հայերը գնում են, բայց թուրքերը ինչ որ պատրուակ բռնելով չեն զարկ. պատրուակը բացուում է. թուրքերին օգնութեան են հասել Ալեքամի հարիւրաւոր զինուորուած թուրքերը մի քանի յայտնի աւազակների առաջնորդութեամբ:

Երկու ժամ Ծուռի է հասնում նահազապետը. Ոսում է հաշտութեան մասին. Մի առ ժամանակ զինադադար է. նահազապետը առաջարկում է հաշտութեան բանակցութիւնը սկսած ժամանակ ոչ մի կողմ իրաւունք չունի հրացանաձգութիւն անել. թուրքերը յամա կերպով շարունակում են իրենց գործը ամբողջ գիշերը. Օգոստոսի 18-ին սկսում է Ազուլեաց եկեղեցու մօտ մի շուտիւմ. մոլեռանդ ամբողջ ուզում է ներս խուժել. բայց հայերը զինուորների օգնութեամբ յետ են մղում թուրքերին, որոնք ահազին կտորածներ են տնում. Ժամը 10-ին սկսում է Ղուելուի մօտ նոր յարձակում. Մօլլան առաջին շահա Այի գոռալով խրախուռում է աւերի ամբողջին. Ներս են խուժում հայկական թաղը. բայց այստեղ էլ հնար է լինում յետ մղել թուրքերին. Ընկնում են եւ մի քանի հայաջեր. Այրում են մի շարք հայկական եւ թուրքական տներ:

Փոխ նահազապետ Բարանովսկին իր բնակարանը հայկական թաղից տեղափոխել է թուրքական թաղը. Խանի աղջկայ տունը. Հայկական թաղից այնտեղ է փոխադրուել և նուազարտունը. Իրսի այլարհի հետ կտրուած է մեր բոլոր յարաբերութիւնները. Թուրքերը հաշտութիւն չեն ուզում:

Հրդեհը սկսել է Ազուլեաց եկեղեցու ներքեւից. Գոյարեանի տան մօտեքից քամին առաջ է գնում դէպի արեւմուտք. կարմիր սարսափը հետզհետէ շարունակում է լափել տախտակից տանիքաւոր հայ տները և յամառութեամբ առաջ է գնում դէպի հայկական կենդրոնը. Գնդակների վզվզոցն էլ հնար չեն տալիս

կրկնուել կամ կղզիացնելու այրուող տների կատարի բոցերը Չկան հրդեհաչէչներ. պակասում է և այդպիսի մի կազմակերպութիւն:

Թուրքերը հրդեհել են զինուորական հիւանդանոցը. Խանդավիւրեանի թատրոնը և ուրիշ շատ տներ:

Ոսումանում են հաշտուել... Ժամերը գլորում են. բայց սպարդիւն: Ժողովրդի մէջ ահազին սարսափ է սկսուում Խանուխպանները. արհեստաւորները մի կերպ դուրս են կրում իրերը. ապրանքները սփռելի, ինչ որ գեղ փրկել կարելի է... Հրդեհը բռնել է Գամալեանի տնից սկսած ամբողջ հայկական միջին թաղը և մինչեւ կէս գիշեր կլանել քաղաքի հարուստ մասը Ինչեւ: Թորթանան, Միւս կողմից հրդեհը սկսել է թուրքական բազնիսի մօտի Սարուխան-Բիզեանի տնից, որի թուրք բնակիչները երկուր ժամանակ իբրեւ գիրք բանեցնելուց և այդ մասի հայկական ամբողջ թաղը կրակի և աւարի ենթարկելուց յետոյ. այրում են և այդ տները և հեռանում:

Այդտեղից Ազուլեացն անցնում է զուգահեռական տները այրուած են. Ազուլեաց և Ղազանչեցոց եկեղեցիների աջ ու ձախ փողոցների վրայ գտնուող բոլոր տները մինչեւ մի կողմից Բարեգործական ընկերութեան գրադարանի ներքին մասը. իսկ միւս կողմից Խուրարեանի խանութի գլուխը այրում են: Այրում են այն տեսակ հսկայական շինութիւններ, ինչպիսիք են Փամալեանների, Խունուցի Սպանդարեանների Մարտի Աղի քարվանսարէն, Միքայէլեանի և Թամիրեանների տները: Այրում են զինուորական հիւանդանոցը, թատրոնը, Մ. Յէր-Յակոբեան տպարանը, դատարանը և զուամեն իր բոլոր ղօկու մենտներով, երկուհարիւր վաթսուս տուն և մօտ երեք հարիւր խանութ:

Գ. Գիշերը թօփխանում էին էր. Հրդեհը կլանել էր հարիւրաւոր բանուորների բնակարանների ստեղծագործած հսկայական շէնքերը. Մուսու ու մոխիր էր դարձել քրտնաջան տղամարդի և բազմաշարչար տանտիկնոջ տանեակ տալիների կահ կարասիքը. կրքարների տակ այրուած թաղում են հարիւրաւոր արհեստաւորների այլատանքի ցամաքած աղբիւրները. Այդ նեղ օրերին այրուած թաղանուած են կենսական մթերքների ահագին շտեմարանները, մեծ քանակ ըստօմների ահագին կապոցները. Տից-ցից կանգնած սեւ ծիւնելոյցները միայն, անխօս լալ-

կանների պէս, քարացել էին միող փլատակների վրայ:

Թօփխանի հրապարակի վրայ թափաթուած էին դեռ շատ ալրի և շաքարի քակներ. Սրանց տէրերը չը նայած տեղի ոչ անապահովութեան, անխնամ թողնելով իրանց հարստութեան կոյտը, ապաստանել էին զօրանոցում կանանց և երեխաների մէջ՝ բարձրի տակ դնելով իրանց նորագոյն հրացանները:

Սակայն սա միակ դեպքը չէ. երբ հարուստ հայը մինչեւ վերջին ընդհան էլ հաւատարիմ է մնում իր վաճառականական գասակարգային գծումութեան: Մի տեղ նա չէր ուզում իր արդէն հրդեհի անխուսափելի վտանգին ենթարկուած տունը քանդելով ազատէ գրանով ամբողջ թաղը. Մի ուրիշ տեղ նա զլանում էր մի քանի հարիւր ուրիշ վճարել կրակի և զընդապի առաջ կանգնող մշակներին, իր տասնեակ հազար արթեցող տան տանիքները կրակի բռնկումներից ազատելու համար:

Ամենքը անհամբեր սպասում էին կոթի վերջնական ելքին, մոռանալով իրանց կրած ծանր կորուստները. Այդ գիշերն էլ չնայած փոխ նահազապետի յայտարարութեան, թուրքերը աւելի իրանց դիրքերը յարմարեցրին. քան թէ հաշտութեան բանակցութիւնների մասին էին մտածում. Ամբողջ գիշերը շարունակուում է հրացանաձգութիւնը. նոյնը շարունակուում է և օգոստոսի 18-ի առաւօտից: Գիշերը թուրքերը թալանել են մի կողմից Այդինեանի տունը. միւս կողմից շարունակում են թալանել եւ այրել նահատակի թաղը. Այստեղ հայերը կորցրել են իրանց քաղաքի զինուորներից շատերին: Մարգարին, Շամիրին, Իչխանին: Սակայն թուրքերի զոհերն էլ այստեղ բազմաթիւ էին:

Մի նեղ փողոցում—Ղուզուց տան կողքին—սպանուած էր տասնեակ թուրքերի մի խումբ, որ մի երգող մօլլայի առաջնորդութեամբ ներս էին ուզում խուժել հայկական թաղը:

Հաշտութեան իբր պայման առաջարկել էին նախ գերիների յանձնումն: Հայերը յանձնել էին երեսուն թուրքերի, դրանց փոխարէն ստանալով միայն 5 հայ—մօտ քառասունից: Այդ հաշտութիւնն էլ խախտու էր: Օգոստոսի քանին թուրքերի ուժեղ հրացանաձգութեան տակ հայերը մուգիկայով եւ թափօրով հաշտութիւն են առաջարկում. բայց անհետեւանք... Սրանք յետ են մղում թուրքերի գնդակներից:

(Շարունակելի)

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ
ՎՍՈՆԱՅԻ ՄԷՋ

Ինչպէս Պուլկարիոյ բոլոր քա-
ղաքներուն մէջ, նոյնպէս և Վառ-
նա՝ ազգային վարժարանաց ու-
սուցչական մարմինը այլեւս կազ-
մուած է :

Կրթական նոր տարեշրջանի
մը սեմին վրայ ենք բնական է
ուրեմն հարցնել թէ՛ նոր տարե-
շրջանը ի՞նչ կը խոստանայ, ի՞նչ
կրնայ տալ մեզ իրաց այս վիճա-
կին մէջ : Աններելի սխալ մը
պիտի ըլլար . մանաւանդ ազգա-
յին ուսուցչի մը համար, ամեն
ինչ սպասել, ակնկալել ուսուց-
չական մարմնի մը հաւաքական
կարողութենէն, բարեկամեցո-
ղութենէն և համերաշխ գործու-
նէութենէն . երբոր մեր վարժա-
րաները դրուած են այն պայ-
մաններու մէջ, որոնք ամէն օր,
ամեն ժամ կը ստեղծեն նոր նոր
խոչնդոտներ և արգելքներ, որոնց
անկարելի է յաղթել, ոչնչ-
չացնել նոյնիսկ ի ներկայութեան
ամենամեծ բարեկամեցողու-
թեան :

Որո՞նք են այդ խոչնդոտները,
ի՞նչ բնոյթ ունին անոնք և ուր-
կէ՞ ծնունդ կանոնն՝ ահա հար-
ցը, զոր մենք մինչեւ այսօր
չենք ըրած և ո և է լուրջ ու-
սումասիրութեան առարկայ դեռ
չէ եղած մեր խնդը ու կրակ Պուլ-
կարահայ գրականութեան մէջ :

Ճշմարիտ է թէ մեր դպրոցա-
կան անաշուղտութիւնները բոլորը
գիտեն, բոլորը կը խօսին անոնց
վրայ, ամենքը այդ անաշուղտ-
ութեան վրայ կը փորձեն իրենց
ճառախօսական կարողութիւննե-
րը՝ սկսելով նոյն իսկ ուսուցչա-
րաններէն, խորհրդարաններէն
և խմբագրատուններէն մինչեւ
յետին սրճարանը . բայց միեւ-
նոյն ատեն սլ ոչ նուազ ճշմարիտ
է թէ՛ մենք և ոչ մէկը դեռ չէ
հետաքրքրուած լրջօրէն այդ
անաշուղտութիւններով, գտնալու

համար անոնց իսկական պատ-
ճառը :

Մենք մինչեւ այսօր բաւակա-
նացած ենք միայն անաշուղտու-
թիւնները շնչտելով և ամեն ան-
գամ որ անոնց վրայ խօսելու
փափաքը ունեցած ենք, միշտ
մեր ներքին, թաքուն շարժա-
ռիթը եղած է պարսաւել, սե-
ւացնել արդարացի և կամ անի-
րաւարար այս ու այն անձնաւո-
րութիւնը . որ ճակատագրին
բերամբ դժբաղդութիւն ունե-
ցած է այդ անաշուղտութեանց հետ
կապ ունենալու : Այսքանը բա-
ւական չէր և չէ, սակայն մեր
ճակատագրական կարճատեսու-
թիւնը աւելին հետուն տեսնե-
լու չէ թոյլատրած :

Խոչնդոտներ . արգելքներ կան
անտարակոյս և շատ ու շատ տե-
սակ տեսակ : Եւ ինչ որ կարելու
է այս տեղ գիտել, այն է՝ թէ
մենք մինչեւ այսօր երբէք փորձ
մը ըրած չենք պնտիք ուսում
նասիրելու, որոշելու անոնց բը-
նոյթը ու ծնունդը, դասաւորե-
լու, վերածելու սխառէմի մը՝ ու-
նենալով տեսակէտ մը, յենակէտ
մը : Միայն այս վերջին պարա-
գան կրնար մեզ ապահովել իս-
կական, ճշմարիտ ըմբռնում մը,
որով կարենայինք խոչնդոտները
ըմբռնել իրենց ամբողջութեամբ
և մանաւանդ անոնց ծնունդ տը-
ւող էական, արմատական պատ-
ճառները . հետեւաբար և կարե-
լի պիտի ըլլար շատ աւելի նւազ
ուժեղ ու կարճ ժամանակի մը
մէջ կասեցնելու կրթական գոր-
ծի խոչնդոտներու սպառնացող
ազդէւրները, որոնք շարունակ
և անընդհատ 20 տարիներէ ի
վեր կը գործեն իրենց աւերիչ,
քանդիչ ազդեցութեամբը :

Ուրիշ ի՞նչ կերպով պիտի կա-
րենային բացատրել ազգային
իշխանութեանց՝ հոգաբարձու-
թիւններու և թաղականութիւն-
ներու գերբնական(ու) ջանքերու
ապարդիւն հետեւանքը : Հոգա-
բարձուներ, թաղականներ ի-

րենց կարողութեան և հասկացո-
ղութեան որոշ չափովը գրեթէ
ամեն տարեշրջանի սկիզբները
և վերջերը կը ջանան վարժա-
րանները գնելու իբրեւ թէ ա-
ւելի նպաստաւոր, աւելի արդ-
իւնաւոր պայմաններու մէջ :

Երկու և կամ աւելի երկար ա-
միսներ ժողովներ կը գումարեն,
կը խօսին, կը ձեւեն, կը շարեն,
կը հաշուեն և վերջապէս կորո-
շեն, կը կարեն : Բայց այն ինչ
որ ամեն բան կը պատրաստուի
և գործի կրկնուի, նոյն սխալ-
ները, թերութիւնները դեռ ե-
րկուան անցեալին մէջ կրկնուին
երեւան գալ և իրենց ծանօթ ազ-
գայութիւնը գործել : Յոյսերը
օղը կելլան, երկուան ձեւելու
ատեն ստեղծուած ոգեւորման կը
յաջորդէ յուսահատութիւնը, յու-
սախարութեանց անխուսափելի
հետեւանքը :

Պէ՞տք է բացատրել ասիկա .
Ջսոր պատճառները գիտաւո-
րաբար երկու են :

Առաջինը՝ ձեւողը ձեւել չը
գիտեր և ձեւելու յաւակնութիւ-
նը կուեննայ գիտակցաբար և
կամ անգիտակցաբար, երկրորդ՝
չը ճանչնալով և ճանչնալու ան-
կարող ըլլալով մեր կրթական
գործի աւելի թագուն պայման-
ները . կը տեսնեն միայն աչքի
զարնոյնները և իրենց բոլոր ու-
շագրութիւնը կեդրոնացնելով
վերջիններուն վրայ՝ ամեն ճիգ
կը թափեն զանոնք վերցնելու,
չնչելու՝ առանց ձեռք զարնե-
լու աւելի թաքուններուն, որոնք
և աւելի զօրաւոր են :

Այսպէս մեքենան լարուած
կուտայ գրեթէ նոյն արդիւնք
ները նուազ կամ առաւել զոհա-
ցուցիչ :

Օրինակով մը լուսաբանենք մեր
ըսածը :

Ետտ անգամներ կը լսէք՝ այն
ինչ ուսուցչին օրով այն ինչ բա-
նը պատահեցաւ, որպէսզի չը
պատահի, ուսուցչիչը պէտք է,
անհրաժեշտ (!) է հեռանայ և ա-

նոր տեղը գայ ուրիշ մը, որուն
համար կըսեն թէ՛ աւելի բարի
և աւելի կարող է :

Ասիկա միայն փորձ մըն է, որ
կըլլայ, առանց ապահով ըլլալու
փորձին հետեւանքին, արդիւն-
քին : Եւ ի՞նչ կը ցուցնէ փորձը :

Նոյն բանը նորէն կը պատահի
Փոլձը չը յաջողեցաւ : Յաջորդ-
աւորին, մի զարմանաք եթէ ըսեմ
յաջորդ ամիսը, ուրիշ մը կը բե-
րեն ի հարկէ նորէն փորձելու
համար . եկողը՝ գացողը կը յի-
շէցնէ : Եւ այսպէս փորձերը կը
շարունակուին միշտ և միշտ ա-
ւելի գէշ արդիւնքներով :

Հապա՞ աշակերտները : Ասոնք
փորձի նիւթ են, փորձի առար-
կայ, որոնց վրայ կըլլան փոր-
ձերը և վերջապէս յոգնելով
խեղճերը կը պարտաւորուին ա-
զատուելու, փրկուելու փորձե-
րէն կամ աւելի լաւ փորձանքնե-
րէն և տեղ բանալու ուրիշներու,
որոնք գրան առջեւը կը սպասեն
նոյնպէս փորձուելու համար :

Այո՛, բաւական չէ՛ միայն այն
ինչ ուսուցչի օրով, այն ինչ բա-
նը պատահեցաւ ըսելու, այլ պէտք
է անհրաժեշտ է հարցնելու ին-
չո՞ւ պատահեցաւ : Այն ատեն
պիտի տեսնէք թէ գէպքին, պա-
տահածին պատճառը յաճախ չէ՛
այս կամ այն անձնաւորութեան
նկարագրին, կամքին և կամ
հասկացողութեան մէջ, այլ պուր-
սը, անոր անհատականութենէ
բոլորովին դուրս, արտաքին պայ-
մաններու մէջ, դպրոցական թէ-
միմին մէջ, կրթական, բարոյա-
կան և նիւթական պայմաններու
մէջ :

Այս ընդհանուր և հիմնաւոր
պարագան շնչտելով, մեր նպա-
տակը չէ՛ յօրինել արդարացման
տեսութիւն մը և կամ նուազեց-
նել անհատական պատասխանա-
տուութիւնը հանրային գործոց
մէջ :

Ընդհակառակը նուազ չեն պա-
րագաները, ուր ինչպէս ուսու-
ցիչը, նոյնպէս և միւս բոլոր ազ-

ՍԷՍԻԼԻԱ Մ • ՊԼԷՑԳ

Դ Է Ֆ Ի

Հայկական Ռուման մը
(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

ԳԼ Է.

ՊՊՎ Է ԴՐՕԳՕՆ

Միքէի գործը իմ վրաս աննելով,
իրեն համար սուրճ պատաստեցի . որ,
անշուշտ, էնորինէն լաւագոյն կը հա-
մարէր!!! պարզուկ կերակուրէիս ու-
տել սկսանք մեր աչքերով Սէր խօ-
սելով այն աչքերուն, որոնք, կրկին
ու-կրկին, քարայրի կողմ պատերուն

իր անտաշ քարակոյտերուն, իր մերկ
յատակին և իր աղօտ կանթեղի լոյ-
սին հետ կը խօսէին, բոլորն ալ սի-
րոյ վարդագոյն ճաճանչովը գրախտի
կերպարանափոխուած :

Ժամերը արագօրէն սահած էին
ու մեր աչքերը ջուրով ծանրացած,
երբ առաջարկեցի Սիւլէյմանին ան-
հրաժեշտ երթալ ու քանի մը ժամ
քնանալ, յարելով՝— «Դէ՛ֆին ալ պիտի
քնանայ» .

— Ընչէ՛ է, Դէ՛ֆին, Սիւլէյմանդ
կը հենազանգի : Անմիջապէս հողմար-
գելը վերցնելով՝ դուրս ելաւ : Անու-
հետեւ բազմոցին վրայ երկնցայ, մոր-
թերը վրաս քաշեցի և, յուզմունքով
ու յոգնածութեամբ ընկճուած ըլլա-
լով, խոր աներազ քնոյ մը մէջ ին-
կայ ու միմիայն այն ժամանակ ար-
թնցայ, երբ ներսը իրարանցում մը
լսեցի : Վեր նայեցայ . աչքերս տրո-

րեցի ու տեսայ որ մեր հայը հողմար-
գելին ներսի կողմը կանգնած է : Յար-
գական կերպով բարեւեց, թասով
ջուրը ցոյց տուաւ, մեծ կանթեղը
ի դով լեցուց, սրբիթի կանթեղը
վառեց և ամենաթարմ միրգերով լե-
ցուն ափսէ մը սովորական տուփին
վրայ դնելով՝ միևնոյն բարեւով, լուիկ
միջիկ հեռացաւ : Միքէս ապահով էր
ու թեմիս Ուզեցի ետ կեցնել հայը ու
էնոր ժամանումին մասին հարցումներ
ուզել, սակայն գիտէի թէ ամէն ինչ
պիտի լսէի Սիւլէյմանէս, որ շուտով
հոս պիտի ըլլար Աճապարեյի արդու-
զարդս շտկել ու պատրաստ ըլլալ զայն
ընդունելու : Կը խոստովանիմ որ Մի-
քէս կորսնցուցած էի երկար մագե-
րուս անտանելի հիւսքերուն վարժ-
ուած չըլլալով իմտա ձանձրալի թուե-
ցաւ : Հագիւ թի ախտատանքս աւար-
տած էր : Սիւլէյման ներս մտաւ :

Հիացումով իրեն նայեցայ : Ան միեւ-
նոյն քաղամարտիկ զինուորն էր կըր-
կին, զուարթ, աչալուրջ, ամէն գործի
և վտանգի ընդունակ : Իրեն յայտ-
նեցի այդ :

— Եւ դուն, Դէ՛ֆին, ըսաւ ան,
կարծես Պաֆեան աստուածուհին
հետ ծովէն ելեր ես, կամ... կամ...
Վպեցաւ : Չեմ գիտեր թէ Սիւլէյմա-
նի գիցումին ո՞ր երանելիաց աչխար-
հէն եկաւ : Ի՞է որ հիմա Մահճետական
մը ըլլայի, — կրկին ժպտեցաւ, — պիտի
հաւատայի որ՝ Սիւլէյմանի երջան-
կութեան համար դրախտէն զրկուած
հուրի մ'ես :

Երկուքս ալ զուարթ ու երջանիկ
էինք : Կը վախնամ թէ անգիտակցօրէն
մեր բաժանումի ժամերէն կը դողնա-
յինք . — որ գուցէ՛ յաւիտենական ըլ-
լար... :

— Կը տեսնեմ որ Միքէս ապահով

գային պաշտօնեաներ քիչ շատ նպաստած են իրենց գործունէութեամբ՝ հասարակութեան և ազգային իշխանութեանց մէջ իշխող հիմնապէս սխալ ըմբռնումին կազմութեան՝ բացատրել ամեն անաջողութեամբ, շարակամութեամբ և այլ ինչով:

Կան պարագաներ, որոնք յայտնի ակններեւ ցոյց կուտան թէ՛ անհատները իրենց գործունէութեամբ, եթէ ոչ ամբողջապէս, զէթ մեծաւ մասամբ բաժին ունին որոշ վիճակին մէջ:

Այո՛, այդ պարագաները պէտք է լաւ ուսումնասիրել և երբ բոլոր արտաքին նշանները կը նըպաստեն համոզուելու համարատոնց (պարագաներու) գոյութեան և փաստակարարութեան մէջ՝ այն ատեն պէտք չէ՛ խնայել և ոչ մէկուն:

(Շարունակելի)

ՊԱՏԵՐԱԶՍԵՆ ՎԵՐՁ

Ամփոփ վիճակացոյց մը հակամարտիկ տէրութիւններու կրած վնասներուն:

—)o(—

Լէվ Թօլսթոյ էր, որ առաջին անգամ ձայն բարձրացուց պատերազմին դէմ Վճռալի ուղղած իր երկարապատում նամակով, կոչ ընելով քաղաքակիրթ մարդկութեան յառաջ նետուելու վերջ մը սուլ այս գորհուրելի սպանդանոցին:

Իրաւ է թէ բաւական յուզում և հետաքրքրութիւն յառաջ բերաւ գաւազակական բոլոր խաւերու մէջ ալ, սակայն, իրականութեան հողի վրայ չանցնելու և ի վերջոյ ծիծաղելի նիւթ դառնալու պատճառները հետեւեալներն էին. — Նախ՝ որովհետեւ Թօլսթոյ ճանչցուած էր չափազանց սրբանուէր ու երկկուսի մէկը. բուն մը, որ քաղաքական աշխարհին մէջ շատ գործի չի գար: Երկրորդ՝ որ զեռ ոչ Բօրթ Արթուր էր ինկած և ոչ ալ Մուքոմէն և երրորդ՝ ու էն զլիւսաւորը, իր գրելու ու խօսքը դը-

հասած է տուն Ծատ ուրախ եմ, Լաւագոյն չէ՛ր ըլլար եթէ ես ալ հետը գացած ըլլայի:

Այո, տուն հասած է, ու ատոր դրական ապացոյցը գրկած է: Այդ թարմ, հրապուրիչ ու գիզեցիկ պըտուղները չնոս տեսնելու վերադարձին առաջին գործը եղած է իր իշխանութիւնը զրկել գանձը:

— Սիբիլի՛ Միքէս գոչեցի, Սակայն վստահ եմ որ միայն ինձ համար չէ ատոնք. իր տիրոջ համար ալ է:

Սիբիլի ման ժպտեցաւ Այդ քամի-ծաղին մէջ գրաւիչ բան մը կար ինձ համար, իր բովանդակ դէմքը կը լուսաւորէր այն և թէպէտեւ գիտագծերը իր մալրական սերնդին—մայրը յոյն էր,—քլասիկ գեղեցկութիւնն և կատարելութիւնը պահած էին, բայց ընդհանրապէս սխալ արտայայտութիւն մը, հպարտ զգուշաւորութիւն

րական գործունէութեան վերածելու միջոցներու պակասութիւնը:

Այս անգամ գոնէ, եթէ չընենք միշտ, Թօլսթոյի քիչ մը շատ վեր թոցնող գաղափարները և նախագուշակումները ունեցան իրենց անուրի իրականացումը, և հիմա, որ Ռուզվէլթի հեղինակաւոր և հզոր ժեսթով ամեն ինչ, ամեն սարսափ վերջ է գտած, գործնենք աչքերնիս անցեալին վրայ և տեսնենք թէ ինչ են պատերազմին տուած «բարիքները» մարդկային ցեղին, — նիւթական թէ բարոյական:

Շուքազը որ պիտի ներկայացնեմ ընթերցողներուն, անշուշտ կարելի չէ ընդունել իրբեւ կատարել և անսխալ, քանի որ բացարձակապէս անհնար է դա. բայց և այնպէս իր ամբողջութեան մէջ իրականութենէն հեռու չէ երբէք, քննուած ու ստուգուած ըլլալով մանրազնունի կերպով, ծուցակ մը որ ես կը կազմէի անձնական պրպտումներով և որ թողուցի այդ տաղտկալի գործը, ձեռք ձգելով ներկան, տեսայ թէ զրեթէ հաւասար էր գտածիս, որով և վեղեցիկ ապացոյց առոնց արժանահաւատութեան:

Ուրեմն հակառակ քիչ մը երկարութեան, ջանանք ըստ կարգին նետուել: — (Իրուած գուժարները անգլիական ոսկի ստերլինկի հաշուով են, որ հաւասար է 25 ֆրանկի):

Իրամական կորուստ

Ճարօնի օրական ծախսը, բանակի պահպանումին համար, կը հաւասարէր 200,000 անգ. ոսկիի, որով և 600 օրուայ ընթացքին հասաւ 120 միլիոնի կամ 3 միլիարտ ֆրանք:

Նաւատորմի վրայ վաճառուած 50 միլիոն ոսկիին, գուժարուելով ընտանիքներու, այրիներու և որբերու տրուած հատուցումներուն, կը քերեն մտաւորապէս 80 միլիոն ոսկիի հաշիւ մը, որ նախորդին նետ միասին Ճարօնի ընդհանուր դրամական կորուստը կը հասարացնէ առաւել կամ պակաս 200 միլիոն ոսկիի — ուրիշ խօսքով 5 միլիարտ ֆրանք: Նոյնչափ կարելի է տալ նաեւ, առանց չափազանցութեան, Ռուսական բանակին ու նաւատորմիին. բայց, քանի որ վերջնոյն թէ բանակը և թէ մանաւանդ նաւատորմը անցանկ կորուստներ ունեցան, փոխարինելով դա 50 միլիոն ոսկիի առաւելութիւնով մը, ինչ որ անբաւական կարելի է համարել, Ռուսաստանի ընդհանուր դրամական կորուստը կը հա-

մը կը կրէր ան, ցոյց տալով թէ՛ շատ մը դժբաղդութիւններու ականատես եղած էր: Բայց հիմա, սոյն բաժանումի ժամերուն անձնատուր, այս արտայայտութիւնը բոլորովին անհետացած էր: Յաճախ կանգրագանամ այդ ճաճանչաւտ գուարթ ժամերուն ու այս գիշերտեսիլ հեղինութեան վրայ կը պայմանամ:

ԳԼ Ը.

«ՎԵՐՁ ԱԼՈՑՍՒ Է»

Անգամ մըն ալ լուսինը բարձրացած էր երկնակամարին վրայ. երբ կրկին քարայրին բացուածքին դուրսը կանգնեցայ, ուր քանի մը օրեր վստահուած էի և որոնք ինձ համար էր անթիւն ատերչիան մը եղած էին: Թամանակ... Սիրտը ժամանակ չի

ւասարի 250 միլ. անգլ. ոսկիի, կամ 6 միլիարտ ֆրանքէն քիչ մը աւելի: Երկու պետութեանց ծախսը ի միասին 12 միլիարտ ֆրանք:

Նաւային կորուստ ճարօնական երկու զրահաւոր, ընդհ. ծանրութիւն 27 300 թօն և 32 թնդանօթ: Երկու եզերապահ նաւեր, ծանր. 3,437 թօն և վեց թնդանօթ:

Չորս պաշտպանեալ յաճանաւեր ծանրութիւն 12 000 թօն և 21 թնդանօթ:

Տասերկու հրետանաւ ու թորթիլօներ, ընդամենը 20 նաւ, 43 337 թօն և 59 թնդանօթ:

Ռուսական նաւային կորուստ

Ուրիշ առթիւ մըն ալ պատեհութիւնը ունեցած ենք զնելու Ռուս. նաւային կորուստին ցանկը, որ յար և և ման է ստոր, սա տարբերութեամբ որ 15 զրահաւորներու ընդհ. ծանրութիւնը՝ փոխան մեր ներքեւ զնելիք թուանշանին, տպագրական թիւրիմացութիւնով մը գրուել է 780, 642, այսինքն զրեթէ վեց անգամը աւելի:

Տասնեւհինգ զրահաւոր, ընդհ. ծանրութիւն 178 642 թօն և 223 թնդանօթ:

Հինգ եզերապահ, 15,362 թօն և 15 թնդանօթ:

Վեց զինեալ յաճանաւեր, ընդհ. ծանրութիւն 46,687 թօն և 85 թնդանօթ:

Տասերկու պաշտպանեալ յաճանաւեր, ընդհ. ծանրութիւն 62,675 թօն և 97 թնդանօթ:

Ընդամենը 38 նաւ, 303 366 թօն ծան. և 420 թնդանօթ:

Ասոնց վրայ կարելի է աւելցնել 40ի չափ զանազան կարգի ման նաւեր, որոնք կամ խորտակուած և կամ գրաւուած են ճարօնացիներու կողմէ:

Նաւային ընդհարումներ

Ամփոփ կերպով և թուականներով կը գետեղենք ներքեւ նաւային գլխաւոր ընդհարումները:

1904, փետր. 8. — ճարօնական յաղթութիւն Չիւսուի մէջ:

Փետր. 8. — Բօրթ Արթուրի վրայ յարձակում. երկու զրահաւոր և մէկ յաճանաւ կրակուած:

Մարտ 10. — Ռուսական թորթիլանաւեր կը յարձակին ճարօնական նաւատորմին վրայ:

Ապր. 11. — Ռուսական զրահաւոր մը (Բեթթորալլուկ) կը խորտակուի:

ճանչնար: Անոր, ինչպէս և իւր արարչին մօտ մէկ օրը հազար տարի է: Սիբիլի ման այս իրայայտութիւնս իմաստասիրական պիտի անուանէր: Չեմ գիտեր այդ, բայց գիտեմ թէ շատ մը տարօրինակ բաներ, որ կը գրեմ, կը պարմացնեն զիս: Տղէտ երեխայէ մը աստիճան մը բարձր եմ, բայց և այնպէս, կը գամ ու կը գրեմ այնպիսի բաներ, որոնք անդառնալի ճշմարտութեան գրոշմը կրել կը թուին ինձ. Տիեզերքը յորդող սէ՛րն է զանոնք ներշնչողը:

Քարայրը ձգելէս առաջ Սիբիլի ման ամէն կողմը պտտեցուց զիս: Հրաշալի տեսարան մ'էր այդ: Ապառաժներու մէջէն ճեղքուածքներ մինչեւ լեռան ստորտուր տարածուած էին: Հինգ հարիւր հոգիի սպասուտան կրնար հայթայթել, ըսաւ ինձ, և կատարելապէս անխորտակելի էր:

կսպանուի ծովակալ Մաքարով:

Մայիս 27. — Ճարօնական յաճանաւ մը և զրահաւոր մը կը խորտակուին Բօրթ Արթուրի առաջ:

Օգոստ.—Ռուս. նաւային սօրթի մը, ամբողջ նաւատորմը կը տարողնի:

Օգոստ.—Վլատիվօսթօքի նաւատոր մին վրայ յարձակում Գամիմուրայի կողմէ. յաճանաւ մը կը նկղմի:

1905, Մայիս 27. — խորտակում Ռոժէսոգովէի սկիւի նաւատորմին:

Յամաքային ընդհարումներ

Հետեւեալը կը ներկայացնէ գլխաւոր ցամաքային շարժումները. —

1904, փետր. 5. — Ուզում քաղաքական յարաբերութեանց Ճարօնի կողմէ:

Փետր. 10. — Ճարօնացիք կարչաւեն Գօրէա:

Սպր. 30. — Ճարօնացիք կանցնին Նալու գետը:

Մայիս 1. — Յաղթութիւն մը Գիուլինչէնկի մէջ:

Մայիս 9. — Կը բացուի պատերազմական փոխատուութիւն. (Ռուսաստան երեսուն միլիոն ոսկի. Ճարօն 10 միլիոն):

Մայիս 30. — Գրաւում Տալիի ճարօնացիներէ:

Յուլիս 25. — Գրաւում Նիւլչէնկի ճարօնացիներէ:

Հոկտ. 19. — Պալթիկ նաւատորմը ճանաչարհ կելլէ հեռ. Արեւելքի համար:

1905, յունվ. 2. — Անձնատուութիւն Փօրթ Արթուրի:

Յունիս 26. — Ռուսաստան և Ճարօն կը նդուանին խաղաղութեան խորհրդածողովի հրաւերը:

Յուլ. 8. — Ճարօնացիք կարչաւեն Սախալին:

Յուլ. 29. Ուղղութեան համաձայնութիւն:

Վերելի ցուցակին մէջ, ինչպէս նկատելի է, գրուած են միմիայն այն զլխաւոր յառաջխաղացումները, որ ապագայ յաղթանակներու ճակատագիրը որոշեցին: Հոն յիշուած չեն երբէք առանձին-առանձին տարուած յաղթանակները. Դա կարելի է գրտնել յետագայ ցանկին մէջ:

— Անշուշտ. ըսաւ ան, այժմու գիւտերը, ինչպէս ուժանակը, կրնայ գործածուել զայն խորտակելու կամ ծակեր բանալու համար, սակայն, մեծ ճարտարութիւն հարկաւոր է այդ գործիքները մեր կիրճերէն անցնելու համար:

— Այո՛, ժպտեցայ, ուժանակը շատ քիչ պատեհութիւն պիտի ունենայ այդ պատեհութիւնները վեր ելլելու, առանց բերողները սպաննելու:

— Ետտ ճիշդ է, ու հոտ է մեր ապահովութիւնը: Հիմա նոյն իսկ մեր փոքր խումբին համար ալ ուստիք և պարէն ամբարեւու գիտաւորութիւն կը զգանք:

— Բաւական երկար ժամանակ զըրաւած ըլլալու է այսքան խորոշներ բանալու համար: Որո՞ւ գործը կը կարծես զայն, հարցուցի:

(Շարունակելի)

Ներքեւի ցուցակը կը ներկայացնէ գերեզմանի սպանուած խառն, մասաւոր հաշուով 570,000 կեանքեր...

Հետաքրքիրներու գոհացում տրւած ըլլալու համար, ներքեւ կը զընեմ ժամանակագրական ցանկը...

1904 Մայիս 1. — Կորուստ Եւրոպայի վրայ. Ռուս 2041, Ճարօն 1101, Մայիս 27. — Նանչէնի կռուին մէջ...

Յունիս 14—15. — Վաճառագան. ռուս 10 000, ճարօն 1163.

Յունիս 27. — Մողէնլիկ եւն. ռուս հազար, ճարօն 8 հարիւր.

Յուն. 17. — Միւնոյն տեղը. ռուս երկու հազար, ճարօն 299.

Յուն. 25. — Թաշիչաօ. Ռ. 1200, ձ. 4043.

Յունիս 30—31. — Թորուչէնկ. Ռ. 4 հազար ձ. հազար ութ հարիւր վեց...

Օգոստ. 25—26. — Անչանչան. Ռ. 8 հազար, ձ. 2 հազար.

Սեպտ. 1—5. — Լիստեանկ. Ռ. 25 հազար, ձ. 17,529.

Հոկտ. 9—17. — Էնհօ. Ռ. 68 հազար ձ. 15 879.

1905, Յունիս. 26. — Հունիս. Ռ. 12 հազար, ձ. 7 հազար.

1904 Յունիս—Յունիս. 1 1905. — Բորթ Արթուր. Ռ. 35 հազար, ձ. 50 հազար.

Փետր. 26. — մարտ 12. — Մուքսէն. Ռ. 2 հարիւր հազար, ձ. 50 հազար.

1904 փետր. 8էն մինչեւ պատերազմի վախճանը, նաւային զանազան ընդհարումներու միջոցին տեղի ունեցած կորուստ. Ռ. 15 հազար, ձ. 4 հազար երեք հարիւր.

Նոյն թուականին ցամաքի վրայ տեղի ունեցած ընդհարումներու միջոցին. Ռ. 16 հազար, ձ. տաս հազար:

Երբ առաջին անգամ Թուրքոյ առաջարկ դրաւ խաղաղութեան կայացման անգլիական իրիկնօրեայ թերթ մը. որ մեծ ազդեցութիւն ունի «իրիկնային» մտքերու վրայ...

մանկական նկատելով հանդերձ այդ կարծիքը, չը վարանեցաւ ըսել որ առանկ գաղափարներ ընդունակ են յղանակ միմիայն «իրենց ոտքերը պղպուտի մէջ սնած անձերո, աւելցնելով միանգամայն որ, առանց արիւնի առանց կոուի, մաքառումի, եւն կեանքը չունի քաղցրութիւն...

Նետելով ակնարկ մը վերեւի ցուցակին վրայ, կրնանք գիւրաւ նկատել թէ՛ ինչպիսի ջրարիքներ կը շընորհեն «կոուի, մաքառումի» սիրահարները, կամ, եթէ կուզէք, ուրիշ խօսքով, «ոտքերին տաք ջուրի մէջ սնողները.

Մ. ՅԱԼԱԿ

ՊԷՏՈՒ ԳԻՐՔԸ

Ի՞ր ասարի առաջ յայտարարեցինք թէ ով չէ կարող սպասել որ անհրաժեշտ գումարը գոյանայ Պետոի աշխատութիւնները հրատարակելու համար, կարող է իր տուած դրամը ետ պահանջել...

Այն ժամանակ ոչ ոք ետ չը պահանջէր.

Այս օրեր Ռուսոյ քից մի պարոն ետ է ուղում իր տուած տասր Քրանքը:

Մենք ոչինչ չունենք դրան հակառակ, Սակայն գումարը տրուողով տրված լինելու պատճառով, այսօր չենք կարող այդ գումարից տաս լէվ վերցնել և տալ: Մուրհակի պայմանաժամը լրանում է Մարտի 3ին, Գումարի վրայ իբրեւ տուկոս աւելանում է մինչեւ այդ պայմանաժամը 150 լէվ:

Սրանով յայտարարում ենք որ մինչեւ այդ թուականը ով ետ է ուզելու թող պահանջէ. եթէ ոչ Մարտի 4ին մնացած գումարը տրուողով միասին մենք պէտք է ուղարկենք Ձէյթունի Որբանոցին. Պետոի անունով մի որդ գաստիարակելու համար:

Յաւում ենք որ շար նախանձը դեռ գործի ձեռնարկած օրից սկսած խոշորոտ դարձաւ մեր ձեռնարկը յաջողցնելու. դրամանրամասնութիւնները մենք կը հրատարակենք այն օրը, երբ մեր միջոցներով աւելի պարզ ձեւով կը հրատարակենք Պետոի աշխատութիւնները:

ՊԱՔՈՒԻ ՈՃՐԱՒՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՆԸ (Լը Գուրիէ էօրօպէէն)

Գալով Վիլհէլմ Բ. գիտենք թէ ան բաւական երկար ժամանակէ մը իվեր եղած է Սուլթանի իրական Մեծ վէլիքը, Վիլհէլմ Բ. կը գողայ ապագայ երեւակայական դեղին վտանգի գաղափարին որը եթէ իրականանայ իսկ իրական վտանգ մը չը պիտի ներկայացնէ որովհետեւ տեղիները կ'պացուցեն որ իրենք Եւրոպացիներէն աւելի քաղաքակրթուած են. բայց երբէք ուրիշ տեսնալ գոյութիւնը և աճող տարածումը կանաչ վտանգին, աւելի իրական, աւելի մօտիկ, կուզեմ ըսել մուսուլմանութեան ուժով աւելնելը, եւ բոլորովին կրօնական հարցը խնդիր չեմ շինել: Պոլսոյ կոտորածէն անմիջապէս յետոյ Վիլհէլմ գնաց այդ քաղաքը ուր դեռ թափուած արեւն գոլորշին կը բարձրանար, եղբայրաբար պրկախառնեցաւ մարդասպան Սուլթանին հետ, վերջը գնաց Գամափոս ուր մուսուլմաններու համախմբումի մը առջեւ, քօմիք և նոյն չափով սինքր ճառի մը մէջ արտասանեց յետ Սուլթան Համիտի և ամբողջ աշխարհիս մէջ գտնուող 300 միլիոն մուսուլմաններու բարեկամն եմ:

Աս թուրքերէն ըսել է— «Չար դեցէ՛ք, բանարարեցէ՛ք, թալնեցէ՛ք քրիստոնեաները որոնք ձեր տրամադրութեան տակ կը

գտնուին. ես ձեզի կարտօնեմ, միայն թէ գնեցէք գերմանական ապրանքներ»:

Վիլհէլմ այդ նոյն ներհակ քաղաքակրթական ժեստը կրկնեց Մարտի մէջ մօտերս Մուսուլմանները շատ լաւ հասկցան թէ Վիլհէլմ Բ. ինչ կուզէր ըսել:

Ոճիքի մէջ, որ այսօր կասարուեցաւ Պաքու, Վիլհէլմ կայսրը պատասխանատուութեան մեծ բաժին մը ունի:

Ինչ պիտի ըլլայ հայ ժողովուրդը այս սալ սալներու կատարութեան մէջ, կովկասում թախարները, ուսնիքը, քիւրտերը դաշնակցած են զայն կործանելու, Թուրքիոյ մէջ ջարդերը կը վերսկսին: Եւրոպան շարունակ կը պահէ իր անսլայալ հանդիսատեսի գիրքը:

Ետ հաւանական է նոյն իսկ որ դեռ գտնուին սպետական ձայներ որոնք պիտի մեղադրեն հայերը իբրև պատճառ դժբախտութեան, պիտի յանդիմանեն որ հայերը ինքզինքնին պաշտպանել չը կրցին ու մինչեւ իսկ պիտի գովարանեն մուսուլմաններուն քաջութիւնը, Գժբախտութեան այս նախատիչները որոց մով եւրոպական մամուլը Թուրքիոյ մեծ ջարդերէն սկսեալ հեղեղուելով պտտեցաւ, մեծամասնութեան յրաճանական ուժը շարաշար գործածելու կերպարանքը կընդունին:

Իրօք անկարելի պիտի ըլլար դաշոյնի գործածելու արուեստին մէջ հայերը թուրքերուն հետ համեմատելու, հայերը արժանի չեն այդ յանդիմանութեանց որովհետեւ յայտնի է թէ անոնք միշտ անգէն խուճեր են և երկար առինէ իվեր վարժուած խաղաղ և աշխատաւոր կեանքի մը, միշտ երթ կայ քաղաքի քիւրտերու, թախարներու յարձակմանց, որոնց միակ տրհետն է աւազակութիւնը և ոպանութիւնը յենուած իշխանութեանց վրայ: Սակայն յանդիմանութիւնը յաճախ հիմնաւոր սլչէ, Սմեն տեղ, ուր նախապէս կարելի եղած է հայերը շատ լաւ պաշտպանած են ինքզինքնին, առանց բոլորովին նմանել ջանալու մուսուլմաններու կատաղութեան, կիներու և երեխաներու դէմ եղած բռնաբարոյութեանց մէջ:

Կովկասի մէջ հայերը թախարներուն կը դիմադրեն կատարար և զօրեղապէս:

(Շարունակելի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆիլիպէի ոստիկանութիւնը իմացած է որ տեղացի յոյներէն հրոսախումբ մը կազմուած է Էտիրնէ և Մակեդոնիա անցնելու պուլկարներուն վրայ յարձակելու համար:

— Ազգային պանքայի գլխաւոր վարչապետը ինչպէս և վարչայի ու Պուրկասի պանքաներուն տնօրէնները պաշտօնակն եղած են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Երկրագի մէջ անձնասպան եղած է ձերբակալուած ձերուռի Նրշանը, որ մեղադրուած էր իբր ամերիկահպատակ Վահանի կարեւոր գործադիրներէն մին և հին վտանգաւոր յեղափոխական մը: Վահանը նշանը մատնողը Ֆոսկոյ անունով հելլենուհի մըն է որ Վահանի կից տուր կը բնակի եղբոր կառավարութիւնը այդ կ'ոյ 200 սկի նուէր տուեր է: — Եւրոպական պետութիւնները կառավարութեան արտօնած են իրենց փոստաներու միջոցով կատարելու տակ ինկած անձերու նամակները զրուել:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ռ. ի թէ կոմսի տիտղոսը սաւալէն յետոյ, Բեթերսպուրկի պատուաւոր քաղաքացի ընտրուած է:

— Պերլինէն կը հեռագրեն որ Անգլիա Ռուսիոյ հետ բանակցութեանց մէջ է Պարսկաստանի և Թիպէթի մասին մասնաւոր գաշնագրութիւն մը կնքելու համար:

— 21 սեպտեմբերին Երեւանի թուրքերու և հայերուն միջեւ ընդհարում տեղի ունեցեր է: սպաննուած են 8 թուրք և երեք հայ:

ԿՈՎԿԱՍ

Պարչալոյսի Պաքուէն կը հեռագրեն սեպտ. 15ին ընդհանուր նահանգապետը հաշտութիւն յայտարարեց. հոգեւորականութիւնը և ժողովրդի ներկայացուցիչներն անցան փոփոցներով համոզելով հանդարտուել:

— Պարչալոյսի նախաօգուածով մը կը պարզէ որ հաշտութիւնը և խաղաղարար յանձնարարները դրական արդիւնք մը չը պիտի տան:

Պարզ է ուրեմն, կըսէ, որ գաղանային թախարքն զմիշտ գաղափարները համար անհրաժեշտ է համապատասխան ուժ առաջացնել հայաբնակ վայրերում, ինքնապաշտպանութեան զօրեղ ոյժ. — Պաքուէն արգէն 40000 գործաւորներ մեկնած են:

Ա Ձ Դ

Պոքրէշի մանկապարտէզին համար վկայեալ մանկապարտէզպանուհի մը կը փնտռուի:

Իրմիլ հայ եկեղեցոյ Թաղ. Խորհրդոյ Ատենակապտ Տիար Յ. Իվանչօկու:

Печатница на П. Глушковъ и С-но, Варва